

միածնի գոները փակեմք՝ որպէս զե մէ-
լեղաբէներու գաղափարները՝ նպատակ-
ները և միմայն անշնական նկատմաները և
շահերը պատկերին. իսկ թէ Ս. Լ. ջմիած-
նի գոյուելով՝ Հայաստանեայց Եկե-
ղեցւոյ և Ազգի վիճակը ինչ կլինի, կամ
թէ բաւական մեծ մաս կազմող Հայոց
գոյութիւնը իւր կյանգի՝ կմտաբերեն
կամ կարող են հետաատեսել:

Աւր թողումք՝ որ այժմ Ս. Լ. ջմիած-
նի՝ Վարանդե և Ղեմարանէ բաղկացեալ
մի նշանաւոր՝ մեծ և ծանր հաստատու-
թիւն ևս ունենալով՝ տարեկան որքան
մեծ ծախուց դուռն բացած ունի, զոր և
պարտաւորէ ապահովել ապագայ վտանգ-
ներէն ազատ պահելոյ համար՝ ինչպէս որ
ամեն ջանք ի գործ դրած այժմէն կջանայ
այս նպատակիս հասանել՝ կարելի եղած
խնայողական միջոցները ձեռք առնելով և
դրամագլուխ կամ կալուածք յաւելաց-
նելով: Տակաւին չեմք յիշեր Լ. ջմիածնի
այլ բազում կարօտութիւնքը, բնակա-
րանաց և շինուածոց անյարմարութիւնքը
և նորոգ կառուցանելիք ինչ ինչ շինուա-
ծոց անհրաժեշտութիւնը, նոյն իսկ Սայր
Տաճարիս վերանորոգութեան կարի կա-
րօտ վիճակը՝ որ հրէք պատիւ չբերեր
Հայոց, բայց այս ամենը ահագին գու-
մարներու կրկարօտին և զարդիս ուստի
կարելի է ճարել, վասն որոյ լռութեան
տրուած է:

Եթէ ոչ այս ամենը՝ գէթ շատը Պարս-
կաստանէ յողումաճաղիւրն ևս պիտի դիտ-
նար՝ անձամբ ի Ս. Լ. ջմիածնի պատա-
հած լինելով, կամ թէ յայնժամ կա-
րող էր ըստ բաւականին նկատել և ստու-
գել. ինչ և իցէ: Մեք կյուսամք որ՝ յի-

շեալ պարօնն և նմանները այսուհետեւ
կջանան այսպիսի անօգուտ խնդիրներ
յուզելէ, և չգիտեցած բաներուն վերայ
ևս լռութիւն պահել կսովորին:

Խ Թ Ա Ն

Պատասխանատուութիւնը արգոյ Գ.
Ն. եանցի վերայ թողով՝ անկողմնա-
կալութեամբ կհրատարակեմք հետե-
ւեալը, յուսալով զի՝ որոց անկէ՝ կփու-
թան նոքա եւս կարեւոր բացատրու-
թիւնները տալ եւ կամ ղգուշանալ:

ԵՐԵՅՓՈՒԱՆՈՒԹԻՒՆ՝ ԱՅՍ ԻՆՔՆ

ԳԱՆՁԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ԵԿԵՂԵՅԵԱՏ:

Մինչև 1793 թիւն Փրկչի չունիմք գրաւոր
ծանօթութիւն թէ Թիֆլիսի երիցփոխաններն
ինչ իրաւունքներ են ունեցել իւրեանց տեսչու-
թեան յանձնուած եկեղեցական կալուածոց, ըս-
պատից և կահ կարասեաց, արդեանց և ծախուց
վերայ, բայց այսքան և եթ յայտնի է՝ որ զկնի
վերոյիշեալ թուականին, այս ինքն զկնի Պար-
սից աւերելոյն զԹիֆլիս այն ինչ բնակիչներն
վերադարձած են, գտած են որպէս իւրեանց բնա-
կարանները, նոյնպէս եկեղեցիները կողոպտուած,
մին քանիսը կործանուած և այրուած ևս, վասն
որոյ այնուհետեւ հետեւել են վերանորոգել զա-
նոնք և եկեղեցիները պայծառացնել և նոցա միջի
նուիրական սպասներն և զարգերը հայթայթել:

Արդէս ինչ ինչ գրաւոր ծանօթութիւններէ
կերեայ և նոյն իսկ ժամանակակիցք բերանացի
կվկայէին թէ բնակիչներն իւրեանց այն խղճալի
փրճակումն՝ ոչ այլքան նախանձաւոր և հեղա-
մուտ էին իւրեանց բնակարանների եւ տների
պակաս պատները շրջուցանել և օրական պա-
րենները ձեռք բերել՝ որքան իւրեանց սրբազան
աղօթատեղերը վերանորոգել և պայծառացնել և
նոցա նուիրական սպասներն և զարգերը հայթ-

Հայթիկ, ուստի և ընտրել են իւրաքանչիւր Եկեղեցւոյ համար մի մի Երեցփոխան, որպէս զի աւագ քահանայից հետ տնէ տուն և խանութէ խանութ շրջեն, դրամ ժողովն և գործածեն Եկեղեցեաց համար: Ի հարկէ այս Երեցփոխաններէ ընտրութիւնները կ'անկանէր այնպիսի անձանց վերայ, որք հաւատարիմք էին, չխորոյք Եկեղեցական արդեանց, նախանձաւորք և ջերմեռանդք աւ իւրեանց հաւատն և կրօնն: Էն միջոցում Երեցփոխաններու պաշտօնն էր՝ ըսց ի վերագրելոցն՝ և ծախս անել ժողոված դրամն խորհրդամբ հոգեոր Առաջնորդի և գիտութեամբ քահանայից՝ մանաւանդ ծխական ժողովրդեան և զկնի հաշիւ տալ նոցա և հրապարակաւ ընթեռնուլ Եկեղեցեաց մէջն, հետեւորար հսկել ի վերայ բարեկարգութեան, մաքրութեան և արդեանց Եկեղեցեաց, մի և նոյն ժամանակն, որպէս աւանդութեամբ մնացած է մինչև ցայսօր Հայաստանի մէջը, Երեցփոխանները հաշտարար դատար և միջնորդ էին ժողովուրդի մէջը ծագած վէճերին՝ մանաւանդ և աւանդադատք էին նորա զաղտնեացն:

Ի վերայ այսր ամենայնի Թիֆլիսի աւագ քահանայք և ապա բոլոր քահանայք հետզհետէ, որպէս կերեւի թղթակցութիւններէն, զոր և մինչև ցայսօր կ'վիայեն և ականատեսքը բռնանալով Երեցփոխանների իրաւանց վերայ, սկսել էին իւրացուցանել ինքեանց ոչ միայն Եկեղեցեաց արդեանքն, այլ և իւրեանց ծուխերն, ոչ միայն Հայերի և Արաքսիների այլ և Մահմետականների մօտը բոլորը կամ մի մասն ևս գրաւ դնել՝ և ումա՞ք էլ իրրեւ օժիտ դատեացքը կտային որդեոց յորդի կամ քանի մի տասնական տարիներով, յորմէ և ինչ ինչ քահանայք մնացած էին առանց ծուխի:

Մինչև 1814 թիւն Փրկչի, այս ինքն ցոյալուտն վիճակաւոր Առաջնորդ Ներսէս Արքեպիսկոպոսի (որ զկնի Վաթուղիկոս) այս անկարգութիւնները կ'չարունակուէին, և ոչ մի Եկեղեցի չունէր ինքեան պատրաստի դրամագլուխ: Ինչպէս սոյն Արքեպիսկոպոսի թղթակցութիւններէն կ'երեւի և ժամանակակիցք կ'վկայեն, այն ինչ նա կամեցիւ է ձեռնամուխ լինել առ ի բարեկարգիլ զայնս,

ծագել է բուն ընդդիմութիւն ի կողմանէ քահանայից և որոց պաշտպան են հանդիսացել ինչ ինչ երեւելի գիրդաստաներ իշխանաց, աղիւսականաց և վաճառականաց, ուստի և խռովութիւնն այնպէս է սաստկացել, որ երջանկայիշատակ Նիքիոմ Վաթուղիկոսն անկարող է եղած զայն իւր Առաջնորդն խաղաղացնել, վասնորոյ և տէրութիւնն միջամուխ լինելով տեսել է վիճակաւորի բարեկարգութիւններն իրաւացի են, ստիպել է զժողովուրդն և զքահանայս զիջանկէ բարի կարգադրութեան վիճակաւոր առաջնորդի, որ և հազիւ 1819 — 1820 ամին սկսել է նա նախ՝ բոլոր ծուխերն համահարար բաժանել քահանայից մէջընտան - տան կամ քսան - քսան տուն աւելորդութեամբ գերդաստաներ տալով աւագ քահանայից և ապա ընտրել իւրաքանչիւր Եկեղեցւոյ համար հաւատարիմ Երեցփոխաններ, յայտնելով նոցա իւրեանց իրաւունքն և բաշխելով իւրաքանչիւրին մի մի ժապաւինեալ մատեան առ ի արձանագրել նոցա մէջն ամենայն Եկեղեցական եկամուտներն և ծախսերն, յորոց և ինքն՝ ներկայութեամբ ընտրեալ պատգամաւորների ամենայն խստութեամբ հաշիւ կ'պահանջէր ի լրանալ տարւոյ ըստ որում՝ նա քաջ գիտէր, որ եթէ հաշուետեսութիւնն յանձնուէր ժողովրդոց անշուշտ նոցա անտարբերութենէն կամ կողմնակցութենէն կը ծագէին չարաչոր գործածութիւններ, ինչպէս արդէն կատարուցանուի:

Արժանի է ուշադրութեան և այն, որ նոր ընտրեալ Երեցփոխաններն փոյթեալանդ հոգատարութեամբ և բարի նախանձով սկսել են այնուհետև հսկել ինքեանց յանձնեցեալ Եկեղեցական արդեանց վերայ, մի և նոյն ժամանակն բազմապատկել են պատրաստի դրամները տոկոսօք և ահա 7-8 ամաց միջոցումն բոլոր Եկեղեցեաց զուտ դրամադուխ երեւցել է ցոյսուն հազար ուրբի, ինչպէս կ'ապացուցանէ 1827 ամին տրպեալ մին թերթի վերայ ցուցակն:

Այս կէս պաշտօնական կամ ըստ ևս տաած նահապետական աւանդութեամբ ընտրութիւնն Երեցփոխանաց և հայթհայթումն եկամտից և մատակարարումն ծախուց Եկեղեցեաց փառաւո-

բապէս հետզհետէ կարգաւ կշարունակուէր ցմահըն ներսէս Վաթուղիկոսի իսկ զկնի նորա՝ աւարադարար սակաւ առ սակաւ ամենայն ինչ մերթ յանհոգութենէ հոգեւոր Առաջնորդաց, մերթ յանտարներութենէ ծխական և ժամաւոր ժողովրդոց՝ ամենայն ինչ վերիվայր եղաւ և անկարգութիւնը թագաւորեց և կ'իմպատէր մինչև ցայսօր, յոր մէ և այնքիկ անմերձենալի զրամագլուխք և արդիւնք Եկեղեցեաց զհճեղան զօշարադութեան անդուսպ և կամակոր կառավարութեան ինչ ինչ անձանց: Այնոցիկ սկզբնական պատճառն ի՞նչ է արդեօք, խնդրի բարեմիտ ընթերցողների ուշադրութիւնը:

Առան ընտրութեան նոր Երեցփոխանի, Պանսիստորիայն կամ լաւ ևս ասած Վիճակաւոր Առաջնորդն պաշտօնական կերպիւ կ'հրամանագրէ աւագ քահանային ծանուցումն անել իւր Եկեղեցւոյ մէջը, մի և նոյն ժամանակն նշանակել չորս հաշուատես անձինք՝ նախորդ Երեցփոխանի հաշիւները քննելոյ համար: Այժմեան օրէքն կամ սովորութիւնն ընտրութեան Երեցփոխանի կամ հաշուատեսների պարտին լինիլ առանց խորութեան, այս ինքն մասնակից լինին ընտրութեանց և ընտրեալ զոչոյն բուն ծուխերն նոյն Եկեղեցւոյ, ընդ որս և ժամաւորներն, այս ինքն որք կ'յաճախեն այն Եկեղեցին, Ժամաւորների մէջն են այնպիսիք՝ որք հարկւրաւոր տարիներէ հետէ սեփական տուներ ունենալով մերձ Եկեղեցւոյն, կ'յաճախեն միշտ անդ՝ թէ՛ ծուխ են այլ և այլ Եկեղեցեաց՝ և կան այնպիսիք, որք ո՛ր ուրեք քաղաքի մէջն իւրեանց սեփական տուն չունենալով, բնակարաններ վարձելով, կ'ընակին երբեմն աստ՝ երբեմն անդ, ուստի որ Եկեղեցին մերձ է նոցա բնակարանին՝ անդր կ'յաճախեն որպէս թափառականք, եթէ ներքի իցէ այս բառն՝ յարմարցնել նոցա: Սոցա կարգում են պաշտօնաւորք՝ որք ըստ սովորութեան տեղւոյ, որպէս թէ ազատք են՝ որ քահանայ կամենան՝ ինքեանք նրան ծուխ կարող են լինել: Ի հարկէ ըստ խղճմտանաց և ըստ առողջ դատողութեան, ծուխերը կամ հարկւրաւոր տարիներէ հետէ մի Եկեղեցի յաճախողները աւելի իրաւունք պէտք է ունենան ընտրուիլ Երեցփո-

խաններ և ընտրել հաշուատեսներ նոյն Եկեղեցւոյ ինչպէս և աւանդութեամբ ի հնուց անախ մնացած է մեր և այլ Հայոց քաղաքների մէջն: Բայց տարաբախտաբար այժմ աստ նոր կարգադրութիւնները կամ սովորութիւնը հակառակ են այնքմ, յորմէ ծնում են ամենայն անկանոնութիւնները յագուտ և ի պաշտպանութիւն վիճակաւոր Արքեպիսկոպոսի, քահանայից և երեցփոխանաց, այն ինչ նոքա պաշտօնական կիրպոյլ կակսին և այնուհետեւ ամենայն ինչ ի սկզբանէ ցվերջն, թէ և դատապարտելիք են, բայց մի և նոյն ժամանակն երբ բողոք է ծագում, տեսնում ես նոքա ամենքն էլ ճշմարիտ են և չեն պատասխանատու թէ՛ ի միասին վերառնետ ամենքն էլ յանցաւոր են: Ի՞նչ է սրա զրական պատճառը խնդրեմ՝ ուշադրութեամբ ունենդիր լինել:

Ընտրութեան ժամանակն ժողովում են ըստ մեծի մասին թափառական ժամաւորներն, որք տարին հազիւ մին ապամ կ'յաճախեն այն Եկեղեցին և շատ անգամ են և այնպիսիք, որք երեք չեն յաճախած և իւրեանց կեանքում մի կողմէ չեն ձգած, եթէ չասենք ո՛չ մի Եկեղեցու, այլ այն իսկ Եկեղեցւոյն գանձանական, որի մասին Երեցփոխան ընտրելոյ համար միայն այն օրն կներկայանան ժողովքումն առ ի կատարել զիղձն կողմնակցութեան թափառականաց, և կակսեն համարձակ և յանդուգն ոճով խօսիլ, որպէս զի զղուացնելով զքնիկ ծուխերն՝ արտաքսելանեն նոքա անտի կամ միւս անգամ չ'յայտնուին անդ: Առդարեւ այսպէս էլ լինում է և այսպէս լինելէն յետոյ՝ թափառական ժամաւորք կատարում են իւրեանց իղձն: Էն կերպով և եղած է միշտ ներախնայ ուժումնարանի համար իւրաքանչիւր Եկեղեցւոյ կողմանէ պատգամաւորներ ընտրելոյ ժամանակն:

Այս եղանակաւ ընտրութիւնն կատարելէն յետոյ, նոր Երեցփոխանը ընդ զէմ կամաց բնիկ ծխոց և հարկւրաւոր տարիներէ յետոյ անդ յաճախողաց ձեռնամուխ է լինում իւր պաշտօնին իսկ ընտրեալ հաշուատեսք, եթէ բնիկներէն են՝ ի կրից կամ ի նախանձուէ գրգռեալ չեն մերձենում նախկին Երեցփոխանի հաշիւներին, ըստ որում զիտեն որ՝ եթէ խախտ և ճշմարտութեամբ ևս

քննեն, դարձեալ ոչ Վոնսիտորիայն և ոչ Վի-
ճակաւորն ուշադրութիւն չեն դարձնելու պակաս-
նորդ զրամի վերայ և չեն ևս պահանջել (ինչպէս
Վաթուղիկէ Եկեղեցւոյ Ժողովուրդն քանի մի ան-
գամ գրաւոր խնդրագիրներ տուեց, բայց մնացին
առանց ուշադրութեան, զանցառնելով և պատ ի
պատ պատճառներ յառաջ բերելով, յորմէ քառա-
սուն հազար մանէթ* անյայտացաւ ի պատճառս
մահուան Երեցիփոխանին) և մանաւանդ նոր ընտ-
րեալ Երեցիփոխանէն կամ նորա կողմնակիցներէն
զանազան զրպարտութիւններ կամ յանդիմանու-
թիւններ կ'ըսեն և ինքեանք, այս ինքն հաշուա-
տեք էլ իւրեանց քսակէն վարձ չեն հատուցանել
օրինապէսի դատ վարել և օրինօք պահանջել նա-
խորդ երեցիփոխանէն ևս պակասնորդ գումարն, և
մանաւանդ չունին իրաւունք առանց Վոնսիտո-
րիային դատ վարել, որ երբեք չի ներուժ այսպիսի
եղանակաւ դրամ պահանջել իսկ նոր Երեցիփո-
խանն ևս քաջ զիտելով, որ զկնի երկուց կամ
երեք ամաց ինքն ևս կենթարկուի այնպիսի դա-
տապարտութեան, ուստի կ'պատասխանէ (եթէ
զիմէն առ նա) թէ ես Երեցիփոխան եմ ընտ-
րուած և ոչ վէճ վարող կամ փաստաւան, Բայց
եթէ հաշուատեաները թափառականներէն են, նո-
քա ամենայն օր մի պատրուակ բերելով, գործն
կ'յարաձգեն և նոյնպէս հաշիւներն կ'մնայ առանց
քննութեան և կամ շնորհքի համար առանց
քննութեան կ'ստորագրեն հաշիւներն ուղիղ լի-
նելոյն ինչպէս և շատ անգամ պատահած է, Ահա
այսպէս հաշիւներն կ'մնան երեսի վերայ և կ'չնա-
նան և վիճակաւոր Եպիսկոպոսն կամ Վոնսիտո-
րիայն էլ հետամուտ չեն լինիր այնմ, Արժեւժ
բաւականին հասկանալի եղաւ ընթերցողին այս
տխար անցքերի հետեանքն:

(Ի յետագայ)

ՍՈՒՐԷԱՆԻԱԿԻ ԲԵՅԱՆԴԵԱՆ

ԺԶՂԴ ՏԱՐԵՒԱՐԶ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ ԹՈՒՐԳԻՈՑ

Ազգային Սահմանադրութեան ԺԶՂԴ տարե-
դարձի հանդէսը կատարուեցաւ կիրակի օր (Մա-
յիսի 30) ամենայն փառաւորութեամբ Հիւանդա-
նոցի զիմացի պարտեզին մէջ, ուր ներկայ կը
գտնուէին տասը հազարի չափ ամեն կարգէ և դասէ
ազգային, որոց կէտր տիկնայք էին և օտարազգիք,
ինչպէս են տաճիկ խմբազրք և եւրոպացիք:

Կիրակի առաւօտ Հիւանդանոցի մատրան մէջ
Ս. Պատարագ մատոյց Գեր. Պարապետ Եպիսկո-
պոս Սեյուքեան, ուր ազգային միութեան վրայ
քարոզ մը խօսելով, Ազգին և Սուլթանին համար
բարեմաղթութիւններ ըրաւ:

Ամեն Ս. Պատրիարք Հայրը արդէն շարաթ
իրիկուրէն Հիւանդանոց իջած էր Սահմանա-
դրութեան տարեդարձի հանդէսը իւր պատկա-
ռելի ներկայութեամբ պատուելու և նոյն հան-
դիսին պաշտօնական զիրք մը տալու համար:

Հանդիսաւոր մասնաժող. հանդիսին ղեղեց-
կութեան և հանդիսականաց հանգստեան համար
պարտիզին մէջ յատուկ վրաններ շինած և ամեն
տեսակ կորելի եղած նախապատրաստութիւնք
հոգացած էր Ժամբ Զին տոնները Ս. Պատրիարք
Հայրը Հիւանդանոցի յարէն իջնելով, նաեւ
գաճուաց երկու խումբի և զրօշակակիրներու
առաջնորդութեամբ հանդիսաւայրը մտաւ ուր
անհամար ժողովրդեան կողմանէ կեցցէի աղաղակ-
ներով ընդունուեցաւ: Այս միջոցին ճոխ և չը-
քեղ սեղան մը պատրաստուած էր իր 200 հո-
գոյ համար, որում նախադահեց Ս. Պատրիարք
Հայրը իր շուրջը բոլորելով իւր Փոխա-
նորդը և քանի մը եկեղեցականներ, Անդանին
վրայ ջերմ բարեմաղթութիւններ եղան վեհ
Սուլթանին, ամենայն Հայոց Հայրապետին և Ս.
Պատրիարք Հօր կենաց համար և բաժակներ

(*) Այս գումարը ստուգութեան եւ բացատրու-
թեան կ'կարծենք: